ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1.

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

31 օգոստոսի 2022թ.

Նախագահ Մ.Ա.Զաքարյան

Քարտուղար Ք.Վ.Օթարյան

Ներկա էին խորհրդի 15 անդամներից 14 անդամները:

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց ֆակուլտետի դեկան, խորհրդի նախագահ Մ.Ա.Զաքարյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2022-23 թթ. ուստարվա I կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպում:

2. 2022-23 թթ. ուստարվա մանդատային հանձնաժողովի կազմի հաստատում:

3. Ամբիոնի 2022-23 ուս տարվա տարվա առաջին կիսամյակի անվանական կրթաթոշակների հավակնորդ ուսանողների թեկնածության հաստատում:

Առցանաց քվեարկությամբ՝ 14 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց.

Որոշում՝ 1/1

- **Հաստատել նիստի օրակարգը:**

Օրակարգի առաջին՝ «2022-23թթ. ուստարվա I կիսամյակի Ուսումնական գործընթացի կազմակերպում » հարցի վերաբերյալ ԵՊՀ Իմ բնական գիտությունների ֆակուլտետի դեկան Մ.Զաքարյանը և Ծ/ԻՏ ամբիոնի վարիչ Ա. Հովակիմյանը ներկայացրեցին ամբիոնային և անհատական ուսումնական բեռնվածությունները:

Նշեցին, որ պրակտիկայի կազմակերպմանը և բաշխմանը կանդրադառնան հետագայում: Զեկուցողները նշեցին, որ դասախոսները պետք է ամբիոն ներկայացնեն առարկայական փաթեթները, ինչպես նաև առաջիկայում պետք է իրենց դասընթացների ուսումնական պլանները, ուսումնական նյութերն ու առաջադրանքները պատրաստեն ուսուցման էլեկտրոնային կառավարման e-lerning.am հարթակում տեղադրման:

Մ. Զաքարյանը հավելեց, որ 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակի դասացուցակը ուղարկվել է ԵՊՀ ԻՄ-ի պաշտոնական կայքում տեղադրման, դրանց մասին իրազեկվել են դասախոսները և ուսանողները:

ՈՐՈՇՈՒՄ 1/2

Բաց քվեարկությամբ՝ 14 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվել է.

22-2023 ուստարվա առաջին կիսամյակի նախապատրաստական աշխատանքների ընթացքը գնահատել բավարար:

Օրակարգի երկրորդ, «2022-23 ուս. տարվա Ֆակուլտետի մանդատային հանձնաժողովի կազմի քննարկում և հաստատում» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի դեկան Մ.Զաքարյանի զեկույցը ներկայացվում է ստորև.

Մանդատային հանձնաժողովի կազմը ընտրված է ի պաշտոնե: Ընդգրկվել են.

- ✓ Ֆակի դեկան Մ. Զաքարյանը,
- ✓ Ծ/ԻՏ ամբիոնի վարիչ Ա. Հովակիմյանը
- ✓ ֆակուլտետի արհմ. նախագահ Գ. Գուլակյանը,
- ✓ ֆակուլտետի ՈւԳԸ նախագահ Տ. Ջելոյանը,
- ✓ ֆակուլտետի ՈւԽ նախագահ Է. Կարապետյանը

ՈՐՈՇՈՒՄ 1/3

Բաց քվեարկությամբ՝ 14 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվել է.

Հաստատել մանդատային հանձնաժողովի կազմը:

Օրակարգի Երրորդ՝ «Ֆակուլտետի 2022-23 ուս. տարվա առաջին կիսամյակի անվանական կրթաթոշակների հավակնորդ ուսանողների թեկնածության հաստատում » **հարցի վերաբերյալ** Մ.Զաքարյանը նշեց, որ Բնական գիտությունների ֆակուլտետի «Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)» մասնագիտության Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» բակալավրի կրթական ծրագրի անվճար ուսուցման համակարգի չորրորդ կուրսի ուսանողուհիներ Մարիամ Ղազումյանը և Հասմիկ Ստեփանյանը, երրորդ կուրսի ուսանողուհիներ Իննա Հարությունյանը, չորս կիսամյակ անընդմեջ սովորում են գերազանց: Անուշ Մատինյանը, Սվետլանա Մելիքբեկյանը,Տատյանա Ջելոյանը երկու և ավելի կիսամյակ անընդմեջ սովորում են գերազանց:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

Գ. Սարգսյանը, Ա. Հովակիմյանը Գ. Սիմոնյանը, Ք. Օթարյանը, Մ. Ճաղարյանը,

«Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների» ամբիոնի վարիչ տեխ.գ.թ., դոցենտ, կրթական ծրագրի ղեկավար Ա.Հովակիմյանը ներկայացրեց, որ Հասմիկ Ստեփանյանը, Մարիամ Ղազումյանը, Իննա Հարությունյանը Անուշ Մատինյանը, Սվետլանա Մելիքբեկյանը, Տատյանա Ջելոյանը աշխատասեր, ակտիվ, պատասխանատու ուսանողներ են, գտնում է, որ արժանի են անվանական կրթաթոշակ ստանալուն:

Գ. Սարգսյանը հաշվի առնելով ուսանողների առաջադիմությունը և այն փաստը, որ ֆակուլտետին ԵՊՀ ԻՄ կողմից անվանական կրթաթոշակ կտրամադրվի մեկ ուսանողի, մյուսները կստանան գերազանցության կրթաթոշակ, առաջարկեց

անվանական կոթաթոշակ ստանալու չափանիշներին բավարարող հինգ ուսանողիերին իր կողմից ֆինանսավորել, գումարը փոխանցել ԵՊՀ ԻՄ հաշվեհամարին և Հասմիկ Ստեփանյանին, Ինա Հարությունյանին. Անուշ Մատինյանին, Սվետլանա Մելիքբեկյանընին, Տատյանա Ջելոյանին ներկայացնել Գ. Սարգսյանի կողմից ֆինանսավորվող կրթաթոշակի։

Մ.Զաքարյանը առաջարկեց Մարիամ Ղազումյանին ներկայացնել «ՀԱՄԼԵՏ ԿԱՐԱՅԱՆ» անվանական կրթաթոշակի, իսկ Հասմիկ Ստեփանյանին, Ինա Հարությունյանին. Անուշ Մատինյանին, Սվետլանա Մելիքբեկյանին, Տատյանա Ջելոյանին ներկայացնել Գ. Սարգսյանի կողմից ֆինանսավորմամբ կրթաթոշակի։

ՈՐՈՇՈՒՄ 1/4

Բաց քվեարկությամբ՝ 14 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվել է.

՝Համլետ Կարայայանի անվան կրթաթոշակի ներկայացնել

№	Անուն Ազգանուն Հայրանուն	ՄՈԳ	Վարկանիշային միավոր	Գնահատված կրեդիտների գումար
1.	Ղազումյան Մարիամ Արմանի	19.3	579	30

ԵՊՀ ԻՄ Տնօրենի հաստատմանը ներկայացնել ԵՊՀ ԻՄ Բնական գիտությունների ֆակուլտետի Ծ/ԻՏ ամբիոնի ֆ. մ. գ. թ,դոցենտ, Գարեգին Սարգսյանի առաջարկը՝ իր կողմից ֆինանսավորվող կրթաթոշակի ներկայացնելներքոհիշյալ ուսանողներին.

№	**Անուն Ազգանուն Հայրանուն**	**ՄՈԳ**	**Վարկանիշային միավոր**	**Գնահատված կրեդիտների գումար**
1.	Ստեփանկան Հասմիկ Լևոնի	19.47	584	30
2.	Հարությունյան Ինա Հրայրի	20		25
3.	Մատինյան Անուշ Աշոտի	19.44	486	25
4.	Մելիքբեկյան Սվետլանա Կարենի	19.44	486	25

5.	Ջելոյան Տատյանա Արթուրի	19.24	481	25

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Մ.Ա. ԶԱՔԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Ք.Վ.ՕԹԱՐՅԱՆ